

KOMITAS
SALON FUNÉRAIRE

Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$565 value)

www.komitas.ca (514) 331-0400

Մոնթրեալի Սուրբ Յակոբ Ազգային Վարժարանի 50-ամեակի նուիրահաւաքի պաշտօնական մեկնարկին հանգանակուեցաւ \$476.650 տոլար



Կարդալ էջ 5

«Հալէայի մէջ հետզհետէ կը մեղմանան զինեալ երեւոյթները. այսօր Սուրիոյ մէջ իշխող վիճակը անորոշութիւնն է». Հարցազրոյց Բերիոյ Հայոց Թեմի բանբեր Մարիա Գաբրիէլեանի հետ



Կարդալ էջ 3

«Հորիզոն»-ի խմբագրակազմը կը շնորհաւորէ ձեր Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, մաղթելով արեւշատ եւ խաղաղ օրեր: Կը տեղեկացնենք նաեւ, որ մեր յաջորդ թիւը լոյս պիտի տեսնէ 8 Յունուար 2025-ին:

Կոչ գանատահայութեան

EXTEND A HELPING HAND TO THE ARMENIANS IN THE MIDDLE EAST

ՕԳՆԵՆՔ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԵՐԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

DONATE TODAY
by visiting ars-canada.ca/donations/ and choosing **Aid to Lebanon** under the **Fund** menu.

ՆՈՒԻՐԵՑԷՔ
այցելելով ars-canada.ca/donations/ եւ **Fund** ցանկէն ընտրելով **Aid to Lebanon**

Լիբանանի մէջ 2024-ի Սեպտեմբերին սկիզբ առած պատերազմական վիճակը ի վերջոյ իր աւարտին հասաւ հրադադարի համաձայնութեամբ: Շարունակութիւնը կարգալ էջ 8:

«Վահէ Յակոբեան եւ Զաւակունք» անուան 150 հազարի նոր հիմնադրամի մը ստեղծումը զարկ պիտի տայ Վանգուվրի եւ գանատահայ այլ կառոյցներու հզօրացման

Վահէ Յակոբեան եւ Զաւակունք, համադորձակցութեամբ Vancouver Armenian Community Center Society-ին (ՀՅԴ Վանգուվրի «Ս. Վրացեան» կոմիտէին) կը յայտարարեն 150 հազարի անձեռնմխելի հիմնադրամի յառաջացումը՝ Armenian Endowment Fund-ի (Թորոնթօ) հովանիին ներքոյ: Հիմնադրամը պիտի կոչուի «Վահէ Յակոբեան եւ Զաւակունք» (VACCES) ֆոնտ:

Հիմնադրամին տարեկան շահոյթը պիտի յատկացուի մեծաւ մասամբ Վանգուվրի Հայ կեդրոնի հովանիին ներքոյ գործող կազմակերպութեանց, տեղւոյն բարեսիրական, մշակութային, երիտասարդական-պատանեկան եւ Հայ Դատի ծրագիրներուն:

Եկամուտէն որոշ բաժին մը նպատակաուղղուած պիտի ըլլայ ՀՅԴ Բիւրոյի Հայաստանի եւ արցախահայութեան ծրագիրներուն, ինչպէս նաեւ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի համագանատական ծրագիրներուն:

Յակոբեան ընտանիքը պիտի շարունակէ սատարել եւ աւելցնել հիմնադրամին մայր գումարը տարուէ տարի:

MAZDA GABRIEL ANJOU

Kevork Asadourian
General Manager

7050, boul. Henri-Bourassa Est
Anjou, QC H1E 7K7
Tél. : 514 328-7777
mazdagabrielanjou.ca

THE ALL-NEW 2024 MAZDA CX-90 PLUG-IN HYBRID



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միֆան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղին աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիրի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



ՄԱԿ անդամ երկրների կողմից Արցախի անկախության ճանաչումը պատմական արդարությունը վերականգնելու միակ միջոցն է. Արցախի Ազգային Ժողով

Արցախի Հանրապետության Ազգային ժողովն ուղերձ է յղել ՄԱԿ-ին եւ ՄԱԿ անդամ երկրներին.

«Արցախի Հանրապետության Ազգային ժողովը՝ որպէս Արցախի ժողովրդի կողմից օրինական ընտրուած ներկայացուցչական մարմին, դեռեւս 2023 թուականի Յուլիի 27-ին միաձայն ընդունած Ուղերձով դիմել է համաշխարհային հանրութեանը, ՄԱԿ անդամ պետութիւններին՝ կոչ անելով յանուն փրկութեան (Remedial Recognition) ճանաչել Արցախի Հանրապետության անկախութիւնը:

ՄԱԿ Անվտանգութեան խորհրդի անդամ պետութիւնները եւ այլ միջազգային դերակատարներ, չնայած բնակչութեանը ցեղասպանութիւնից պաշտպանելու իրենց միջազգային պարտաւորութիւններին (Responsibility to Protect), ցաւօք, բացարձակ անտարբերութիւն ցուցաբերեցին Արցախի խորհրդարանի ընդունած Ուղերձի նախազուգուածների հանդէպ Արցախի բնակչութեանը սպառնացող լրջագոյն գոյաբանական վտանգները մասին, եւ չկարողացան կամ չցանկացան պատշաճ կերպով խոչընդոտել Ատրպէյճանի յանցաւոր գործողութիւնները, երբ վերջինս 2023 թուականի Սեպտեմբերին ռազմական ագրեսիա իրականացրեց Արցախի դէմ եւ էթնիկ զտումների ու ցեղասպանական գործողութիւններին արդիւնքում բռնագրաւեց Արցախի Հանրապետութեան ողջ տարածքը:

Մինչեւ Արցախի նկատմամբ հերթական ռազմական ագրեսիան, Ատրպէյճանը, խախտելով 2020 թուա-

կանի Նոյեմբերի 9-ի Եռակողմ յայտարարութեան դրոյթները՝ մասնաւորապէս 6-րդ կէտը, 10 ամիս շարունակ արգելափակել էր Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը՝ միջազգայնօրէն ճանաչուած արտատարածքային Լաչինի միջանցքը՝ անհնարին դարձնելով կենսական նշանակութիւն ունեցող ապրանքների՝ սննդամթերքի, մանկական սննդի, դեղորայքի մատակարարումները, ինչպէս նաեւ անտեսելով Մարդու իրաւունքների եւրոպական դատարանի 2022 թուականի Դեկտեմբերի 21-ի եւ ՄԱԿ միջազգային դատարանի 2023 թուականի Փետրուարի 22-ի եւ Յուլիի 6-ի որոշումները Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման վերաբերեալ:

Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութեան անպատիժ վարքագիծը ոգեւորիչ է այլոց համար: Աշխարհն օրէցօր ընկղմւում է նոր արհաւիրքների մէջ, որի դիմը հարիւր հազարաւոր անմեղ մարդկանց կեանքն է:

Առաջնորդուելով Արցախը իր կազմի մէջ բռնի ուժով ընդգրկելու քաղաքականութեամբ եւ այդ տարածքից հայկական հետքը լիովին վերացնելու անթաքոյց մտադրութեամբ՝ ներկայումս Ատրպէյճանը հետեւողականօրէն ոչնչացնում կամ իւրացնում է հազարամեակների ընթացքում հայ ժողովրդի ստեղծած պատմամշակութային արժէքները, ապօրինի բնակեցնում դարերի պատմութիւն ունեցող հայկական գիւղերն ու քաղաքները, շարունակում պատանդութեան մէջ

պահել տասնեակ մեր հայրենակիցների, այդ թւում՝ հանրապետութեան ռազմաքաղաքական ղեկավարութեանը:

Այդ յանցագործ հակամարդկային քաղաքականութիւնը կանխելու եւ Արցախի քաղաքացիների՝ իրենց պատմական հայրենիք վերադառնալու միակ միջոցը ՄԱԿ անդամ պետութիւններին կողմից Արցախի Հանրապետութեան անկախութեան ճանաչումն է:

Մինչեւ միջազգային հանրութեան կողմից Արցախի Հանրապետութեան անկախութեան ճանաչումը եւ պատմական Հայրենիք հայ բնիկ բնակչութեան վերադարձի համար անվտանգ պայմանների ստեղծումը, անհրաժեշտ է ՄԱԿ համապատասխան կառոյցների միջոցով դադարեցնել այժմ ընթացող Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի եւ այլ բնակավայրերի հայկական գերեզմանատների, եկեղեցիների, վանքերի եւ պատմամշակութային արժէքների, հանրային եւ մասնաւոր սեփականութեան թաւանն ու բարբարոսական աւերումը՝ պահպանելով Արցախի բնակչութեան հարկադրաբար լքած անշարժ եւ շարժական գոյքը, բոլոր պետական եւ համայնքային շէնք-շինութիւնների, արդիւնաբերական ձեռնարկութիւնների եւ առեւտրային օբիեկտների անձեռնմխելիութիւնը:

Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովը՝ որպէս առաջնային մանդատով օժտուած բարձրագոյն ներկայացուցչական մարմին, ուղեր-

ձով դիմում է միջազգային հանրութեանը եւ կոչ անում ՄԱԿ անդամ պետութիւններին.

Առաջնորդուելով ՄԱԿ կանոնադրութեան մէջ ամրագրուած ազգերի ինքնորոշման իրաւունքի սկզբունքով, հիմք ընդունելով 1991 թուականի Սեպտեմբերի 2-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակման մասին Հռչակագիրը», 1991 թուականի Դեկտեմբերի 10-ին կայացած անկախութեան համաժողովրդական հանրաքուէի արդիւնքները, ինչպէս նաեւ 1992 թ. Յունուարի 6-ին ընդունուած Հռչակագիրը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պետական անկախութեան մասին՝ ճանաչել Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետութեան անկախութիւնը՝ յանուն Արցախի բնիկ ժողովրդի իր պատմական հայրենիք վերադարձի:

ՄԱԿ անդամ պետութիւնների կողմից Արցախի Հանրապետութեան անկախութեան ճանաչումը պատմական արդարութիւնը վերականգնելու միակ միջոցն է, այն կը դառնայ մեր ժողովրդի պաշտպանուածութեան յուսալի երաշխիքը, կը նպաստի 150 հազար հայերի արժանապատիւ եւ անվտանգ վերադարձին իրենց պատմական Հայրենիք՝ արդէն ճանաչուած միջազգային սահմաններում, պատմական բնակութեան վայրերում բնականոն կեանքի համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, ինչպէս նաեւ կ'ապահովի երկարաժամկէտ եւ կայուն խաղաղութիւն յարաւորակասեան տարածաշրջանում»:

«Հալէպի մէջ հետզհետէ կը մեղմանան զինեալ երեսուցները. այսօր Սուրիոյ մէջ իշխող վիճակը անորոշութիւնն է». Հարցազրոյց Բերիոյ Հայոց Թեմի բանբեր Մարիա Գաբրիէլեանի հետ

Հ.- Սուրիոյ մէջ կատարուած իշխանափոխութենէն ետք, ի՞նչ իրավիճակ կը պարզէ այսօր Սուրիան, յատկապէս սուրիահայութեան ապրած շրջանները:

Մ.Գ.- Այսօր Սուրիոյ մէջ իշխող վիճակը անորոշութիւնն է: Ինչ որ տեղի ունեցաւ կայսերական արագութեամբ կատարուեցաւ...

Դէպքերը սրընթաց կը յաջորդեն զիրար: Իշխանութեան հասած ընդդիմութիւնը կը ջանայ կեանքը բնականոնացնել, ժամի դրութեամբ գլխաւոր հրամանատարութեան կողմէ որոշումներ կ'արձակուին: Հրապարակուած հրամանները մարդու իրաւունքներու պաշտպանութեան իմաստով ոգեւորիչ են, կը մնայ գետնի վրայ անոնց գործադրումը տեսնել: Ժողովուրդը տակաւին ցնցումէն չսթափեցաւ, առաջին ժամերուն մոլորուածի նման էինք, իրադարձութիւնները այնքան արագ էին, որ մեր ընկալումը կը վտանգէր: Սուրիոյ բոլոր շրջանները, որոնց կարգին սուրիահայութեան ապրած քաղաքները, կը ջանան վերադառնալ իրենց առօրեային: Հալէպի մէջ հետզհետէ կը մեղմանան զինեալ երեսուցները եւ ոչ սովորական իրողութիւնները, այսուհանդերձ տակաւին աղօտ է պատկերը:

Դրական համարուեցաւ եւ որոշ տեղ մը մտահանգստութիւն փոխանցեց ընդդիմադիր նոր իշխանութեան այն քայլը, որ տապալած իշխանութեան կառավարութեան լիազօրութիւնը պահեց մինչեւ նոր վարչամեքենայի կողմէ կարգ ու կանոնով ստանձնումը, նոյն ձեւ վարուեցաւ տարբեր երկիրներու մէջ գործող Սուրիոյ դիւանագիտական ներկայացուցչութիւններուն հետ: Սակայն նոր վարչամեքենան շատ արագ յառաջացաւ եւ նշանակուած նախարարներուն մասին բաւարար տեղեկանք չունենալը կրկին մտահոգեց: Այստեղ նշեմ, որ տապալած եւ իշխող կառավարութիւններու միջեւ տեղի ունեցած յանձնումն ու ստանձնումը ոչ միայն անցնում է այլեւ բաւական քաղաքակիրթ գործելաձեւով ընթացաւ: Կարելի է ամբողջել, որ վարչակարգը տապալեցաւ, սակայն պետականութիւնը, որ հաստատութեանական համակարգն ունի, կանգուն է, փաստօրէն պետական կառոյցները մէկը միւսին ետեւէն կը վերաբացուին:

Անցումային շրջանի այս կառավարութիւնը պիտի գործէ մինչեւ 1 Մարտ 2025: Իսկ երկրի սահմանադրական կամ օրինական համակարգի մասին տակաւին յայտարարութիւններ չկան:

Հ.- Կենցաղային պայմաններուն առնչութեամբ, որեւէ բարելաւում արձանագրուած է, թէ տակաւին տնտեսական տագնապալի իրավիճակ կը տիրէ:

Մ.Գ.- Կենցաղային պայմաններու մէջ տակաւին շօշափելի բարելաւումներ չկան, տնտեսական տագնապը գերիշխող է, մասնաւոր արձանագրուած ահաւոր սղածի պատճառով: Ապրանքատեսակները եռապատիկ այլեւ քառապատիկ սղեցին: Առաջին քանի մը օրերը սուրիական դրամը կրկին անկում կրեց, սակայն շուտով վերադարձաւ շուրջ տարիէ մը ի վեր ապահոված կայունութեան մակարդակին: Ելեկտրականութեան խնդիրը կը մնայ նոյնը, օրական երկու ժամ մատակարարման դրութեամբ, իսկ ջուրի խնդիրը բաւական արագ լուծուեցաւ: Այսօր կարելի է ըսել համարեա՞ ջուրի տագնապ չկայ:

Մտուելի կամ այլ իրերու ապահովման խնդիր եւս չկայ (բացի դեղորայքէն), պարզապէս գիներու թանկացումն է խնդիրը:

Հ.- Հայկական մեր համայնքներուն պարագային, ի՞նչ կը սպասուի յառա-

ջիկայ օրերուն՝ հայկական կալուածներուն, դպրոցներուն, միութիւններուն եւ եկեղեցիներուն առնչութեամբ:

Մ.Գ.- Ուսումնակրթական բնագաւառի առնչութեամբ նշեմ, որ դպրոցներու աշակերտութիւնը պիտի յաճախէ տարեթիւս 15 Դեկտեմբերէն սկսեալ, մինչ կրթօճախներու անձնակազմը (դպրոցներու եւ համալսարաններու տնօրէններ, վարչակազմեր, ուսուցչակազմեր, դասախօսներ) պիտի վերստանձնեն իրենց աշխատանքները 12 Դեկտեմբերին:

Հայկական եկեղեցիները կը գործեն, նոյնիսկ այս շաբաթ, որ Ս. Յակոբի տօնն է, Հալէպի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Սրբ. Արք. Ազգարեանի ներկայութեամբ, սկիզբ առաւ հսկումի շաբաթը:

Ինչ կը վերաբերի հայկական կալուածներուն, ապա այսօրուան դրութեամբ վտանգ չի սպառնար անոնց, այս մասին յստակ փոխանցում կատարուեցաւ ընդդիմութեան ղեկավարութեան կողմէ՝ քրիստոնեայ համայնքներու ներկայացուցիչներուն հետ անոր ունեցած հանդիպման ընթացքին:

Բերիոյ Հայոց Թեմը՝ Մակար Սրբ. Արք. Ազգարեանի առաջնորդութեամբ եւ Արամ Մանուկեան կեդրոնը ամենայն յանձնառութեամբ ի սպաս դրած են իրենց բոլոր կարողութիւնները համայնքին տէր դառնալու համար: Ինչպէս պատերազմի ահաւոր տարիներուն, այնպէս եւ այս օրերուն, հալէպահայ համայնքը ոչ թէ զգաց, այլեւ շօշափեց իր ետին կանգնած ուժեղ թիկունքը: Թեմակալ առաջնորդին կողմէ համայնքին ուղղուած ձայնային թէ տեսադիւր ելոյթները, խօսքերը, լրատուամիջոցներուն հետ ունեցած հարցազրոյցները, ազգի զաւակներուն, ազգային ու միութեանական մարմիններուն հետ հանդիպումները բալասանի նման կ'ամոքեն հոգու վէրքերը, մանաւանդ անոր ժպտերես արտայայտութիւնները անդորրութիւն կը պարգեւեն:

Սովորական պայմաններուն մէջ հաւանաբար աննշելի բան թուի այս մէկը, սակայն հալէպահայութեան ապրած այս աննկարագրելի օրերուն ապա անոնց ազդեցութիւնը անգնահատելի է:

Հ.- Քաղաքական զարգացումներու լոյսին տակ, Հայաստանի Հանրապետութեան դեսպանատունն ու հիւպատոսութիւնը կը շարունակեն իրենց գործունէութիւնը: Դեսպանութիւն-համայնք կապը կը շարունակուի՞:

Մ.Գ.- Ինչպէս երկրի բոլոր հիւպատոսարաններն ու դեսպանատուները՝ Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչութիւնը եւս Սուրիայէն հեռացած է: Անձնակազմը իր աշխատանքները ժամանակաւորապէս կը շարունակէ Պէյրութի մէջ՝ արտակարգ համակարգով: Լուսաբանական հարցումներու համար հաստատուած է նաեւ թէժ գիծ: Դեսպանութիւնը իր կապը կը շարունակէ համայնքին հետ: Այստեղ նշեմ, որ անցնող գիծը օրերուն, Հալէպ հիւպատոսարանի անձնակազմը ջանք չխնայեց օգտակար դառնալու հալէպահայութեան՝ երբ ի կատար ածեց ընթացիկ այն աշխատանքները, որոնք իր լիազօրութիւններու սահմաններուն մէջ էին:

Այսօր Սուրիոյ մէջ դէպքերը, որոշումներն ու հրամանները այնքան արագ կը կատարուին կամ կը կայանան, որ մէկ ժամ նախորդող արդէն հին կը համարուի: Հարցազրոյցը վարեց Սոնա Թրիթեան Կէտիկեան

Ամէն բերանը բաճալուն Փաշինեան վնաս կը հասցնէ Հայաստանի շահերուն

Ամէն անգամ որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան հրապարակային յայտարարութիւն կը կատարէ, ան վնաս կը հասցնէ Հայաստանի շահերուն:

Փաշինեանի վնասակար խօսքերու վերջին օրինակը 90 վայրկեան տեւած հարցազրոյցն է, զոր ան տուաւ Հայաստանի Հանրային պատկերասփիւռի կայանին, 22 Նոյեմբեր 2024-ին:

Առաջին հարցումը կը վերաբերէր վերջերս Փաշինեանի կողմէ կառավարութեան վեց բարձրաստիճան պաշտօնեաներու աշխատանքէ արձակման՝ Կիրակի երեկոյեան անոնց հեռաձայնային հաղորդազրուութիւն ուղարկելով: Լրագրողը հարցուց՝ ինչո՞ւ զանոնք աշխատանքէ արձակեցիք:

Փաշինեան յայտարարեց, որ անոնց «պաշտօնանկութիւնները ոչ թէ անձնաւորուած են, այլ աւելի շատ համակարգերու կապուած են»: Այնուամենայնիւ, ան ըսաւ, որ աշխատանքէ արձակուած պաշտօնեաները «լաւ կ'աշխատէին»: Լրագրողը մատնանշեց, որ վարչապետը համակարգային փոփոխութիւններ չէ կատարած, այլ ուղղակի աշխատանքէ արձակած է անհատներ: Վարչապետը բացատրեց, որ այս պաշտօնեաները համակարգային ուշագրաւ բարելաւումներ կատարած էին, սակայն հետագային, ժամանակի ընթացքին դարձած են համակարգի մաս: Ան շարունակեց՝ խոստովանելով, որ՝ «Ինձի հետ ալ նման բաներ կը պատահին»:

Լրագրող Տաթև Դանիէլեան այնուհետեւ Փաշինեանին հարցուց Բարձրագոյն դատական խորհուրդի նախագահ Կարէն Անդրէասեանի պաշտօնանկութեան մասին, «մարմինի մը, որ գործադիր իշխանութենէն լիովին անկախ է: Եղաւ այնպէս, որ վարչապետին, այսպէս ըսուած, յորդորով որոշած է հրաժարականի դիմում ներկայացնել: Հիմա ձեր ընդդիմախօսները կ'ըսեն՝ ի՞նչ է ասիկա, եթէ ոչ՝ իշխանութեան մէկ ճիւղին ճնշումը միւսին նկատմամբ»:

Փաշինեան ոչ համոզիչ բացատրութիւն մը տուաւ, որ՝ «Վարչապետի յորդոր չէր, այլ վարչապետի խնդրանք»: Լրագրողը պատասխանեց. «Անկախ դատական համակարգին մասին գործադիրին յայտարարութիւններուն եւ գործողութիւններուն միջեւ ճեղք կայ»:

Իշխանութեան երեք ճիւղերուն միջեւ տարանջատում չկայ: Փաշինեան միանձնեայ կը դեկավարէ երեք ճիւղերն ալ՝ գործադիր, օրէնսդիր եւ դատական իշխանութիւնը: Ան, որ կը շեղի իր փափաքներէն, կ'արձակուի աշխատանքէ եւ կը փոխարինուի: Տարօրինակ է, ասիկա այն մարդն է, որ անդադար կը խօսէր ժողովրդավարութեան մասին, սակայն կը խախտէ ժողովրդավարութեան հիմնական սկզբունքները:

Այնուհետեւ Փաշինեանը սխալեցաւ՝ ըսելով, որ այն պաշտօնեաները, որոնց «խնդրած է» հրաժարական տալ, երկու ընտրանք ունէին՝ «Այդ խնդրանքը կատարել, կամ՝ այդ խնդրանքը չկատարել»: Լրագրողը ընդգծեց, որ եթէ պաշտօնեան մերժէր հրաժարական տալ, «հետեւանքներ» պիտի արձանագրուէին: Փաշինեան անտեղեակ ձեւանալով՝ հարցուց. «Ի՞նչ հետեւանք, օրինակ»:

Ի պատասխան այն հարցումին, թէ արդեօք խորհրդակցեցա՞ւ խմբակիցներուն հետ, նախքան այս վեց պաշտօնեաները աշխատանքէ արձակելը, ան հպարտօրէն ըսաւ. «Ասիկա միանձնեայ որոշում էր»:

Այնուհետեւ լրագրողը հետաքրքրուեցաւ, թէ արդեօք Փաշինեանի խնդրանքով իշխող խորհրդարանական դաշինքի անդամ Նարեկ Զէյնալեանը հրաժարեցաւ իր աթոռէն: Փաշինեան ըսաւ՝ այո՛: Զէյնալեանը հրաժարեցաւ պատգամաւորական աթոռէն, սակայն պատգամաւոր Յովիկ Աղազարեանը մինչ օրս կը մերժէ Փաշինեանին «խնդրանքը»: Փաշինեան ըսաւ. «Ես յոյս ունիմ, որ իմ խնդրանքս

անարձագանք չի մնար»: Այդ խնդրանքէն ետք Աղազարեան քանի մը անգամ հարցաքննուեցաւ իշխանութիւններուն կողմէ՝ խարդախութեան կասկածով: Ասիկա կառավարութեան ուրիշ ճիւղի մը՝ խորհրդարանի գործերուն վարչապետի անտեղի միջամտութեան այլ օրինակ մըն է:

Փաշինեան երկարօրէն քննարկեց Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը համոզելու իր յամառ ջանքերը՝ ստորագրելու այն, զոր ինք «Խաղաղութեան պայմանագիր» կը կոչէ, հակառակ այն հանգամանքին, որ Ալիեւ ոչ միայն չահագրուածութիւն չի ցուցաբերեր ստորագրելու նման փաստաթուղթ մը, այլ նաեւ կ'ընդարձակէ Հայաստանէն հետագայ զիջումներու իր պահանջները: Փաշինեան կարծէք չի հասկնար տարբերութիւնը ստորագրութեան թուղթի կտորի մը, զոր ինք «Խաղաղութեան պայմանագիր» կը կոչէ, եւ՝ իսկական խաղաղութեան միջեւ:

Այնուամենայնիւ, 90 վայրկեան տեւած հարցազրոյցի ընթացքին Փաշինեանին մեծագոյն սխալը այն էր, որ ան հաւասարութեան նշան դրաւ Ալիեւի կողմէ Հայաստանի Հանրապետութեան փոխարէն կեղծ «Արեւմտեան Ատրպէյճան»-ի համար պահանջներուն եւ հայկական պահանջատիրութեան միջեւ՝ «Արեւմտեան Հայաստան»-ի պատմական տարածքի համար:

Այս մասին, առանց հարցումի, Փաշինեան ակամայ առաջարկեց. «Բան մըն ալ ըսեմ, լա՛ւ չըսեմ»: Սակայն, երբ լրագրողը յորդորեց անոր ըսել, ան ուղմբի նման զգայացուց յայտարարութիւն կատարեց. «Լա՛ւ, ըսեմ: Հիմա մենք որքան կը նեղուինք եւ դժուար կը հանդուրժենք, հարց կը սեպենք, որ կարգ մը մարդիկ որոշ տեղեր կ'օգտագործեն Արեւմտեան Ատրպէյճան եզրը, չէ՞: Ուրեմն երբ մենք կ'ըսենք Արեւմտեան Հայաստան, չե՞նք մտածեր, որ կարգ մը մարդիկ կը գրգռենք: Ինչպէս որ երբ Արեւմտեան Ատրպէյճան ըսեն, մենք կը գայրանանք, այնպէս ալ երբ մենք Արեւմտեան Հայաստան կ'ըսենք, ուրիշներ կը գայրանան: Հիմա կրկին պիտի ըսեն՝ հերթական դաւաճանութիւն, ստոր տականքութիւն: Այսօր ես կը գտնուիմ այնպիսի կարգավիճակի եւ պատասխանատուութեան մէջ, որ պարտաւոր եմ մեր ժողովուրդին հետ խօսիլ եւ ցոյց տալ պատճառահետեւանքային կարգերը, շղթաները: Եթէ ես ատիկա չընեմ, կը նշանակէ, որ ես գիտակցաբար մեր երկիրը կը տանիմ դէպի պետականութեան կորուստ: Ես չեմ կրնան նման բան արտօնել»:

Ասիկա շատ ամօթալի յայտարարութիւն է Հայաստանի կառավարութեան դեկավարին կողմէ: Նման պատասխան կարելի էր ակնկալել էրտողանէն կամ Ալիեւէն, բայց ոչ՝ Հայաստանի Հանրապետութեան դեկավարէն: Անհաւատալի է, որ նոյնիսկ էրտողանն ու Ալիեւը նման հակահայ յայտարարութիւն չեն ըրած:

Վերջին հարցումը, հաւատաք, թէ ոչ, հետեւեալն էր. «Կրնա՞ք մեզի ըսել իսկական պատճառը՝ ինչո՞ւ որոշեցիք ածիլել (մօրուքը)»: Փաշինեան հաւատարիմ մնալով հարցումներէն խուսափելու իր սովորական գործելակերպին՝ ըսաւ. «... Պարզ է, որ պատկերի փոփոխութիւն տեղի կ'ունենայ... Ես կրնամ միայն մէկ բան ըսել, որ երբ որոշեցի ածիլուիլ, որոշեցի օրը՝ աւագ դատերս ծննդեան օրը, հակառակ անոր որ հիմա, երբ հարցազրոյցը սփռուի, միւս դուստրերս հարց պիտի տան, թէ ինչո՞ւ անոր տարեդարձին եւ՝ ոչ մեր: Աշոտը (որդին), համոզուած եմ, որ այդ առումով, ոչ միայն այդ առումով, փառատենչ չէ եւ այդպիսի հարցում պիտի չուղղէ»:

Յարութ Սասունեան

Արցախի 19-րդ դարի հայկական ժառանգութիւնն ատրպէյճանական հայաջինջ քաղաքականութեան թիրախում

Արցախի մշակութային ժառանգութեան մշտադիտարկում իրականացնող monumentwatch.org կայքը գրում է.

«Համաձայն Ատրպէյճանի պաշտօնական քարոզչութեան՝ Ատրպէյճանի տարածքում հայկական մշակութային ժառանգութեան օրինակներ են հանդիսանում միայն 19-րդ դարում եւ 20-րդ դարսկզբին կառուցուած հոգեւոր կառոյցները: Ատրպէյճանական քարոզչամեքենան սա «բացատրում է» նրանով, որ «Անդրկովկասում հայերը վերաբնակեցուել են վերջին երկու հարիւր տարիներին Ռուսական կայսրութեան իշխանութիւնների կողմից, եւ տարածաշրջանի հայկական հոգեւոր կառոյցները կառուցուած են հայ վերաբնակիչների կողմից: Անդրկովկասում եւ մասնաւորապէս ժամանակակից Հայաստանի Հանրապետութեան եւ Ղարաբաղի տարածաշրջանում եղած հայկական մշակութային ժառանգութիւնը հենց այս վերաբնակիչներին է պատկանում եւ ստեղծուել է վերջին 200 տարիների ընթացքում»:

Ինչպէս կարող ենք տեսնել, նման յայտարարութեամբ պաշտօնական Ատրպէյճանը «իւրացնում եւ սեփականում է» ոչ միայն ՀՀ, այլ նաեւ Արցախի եւ պատմական հայկական այլ երկրամասերի տարածքում ստեղծուած ողջ մշակութային ժառանգութիւնը: Այստեղ իւրացում է ոչ միայն չորրորդ դարից ստեղծուած քրիստոնէական ժառանգութիւնը, այլ նաեւ՝ աւելի վաղ շրջաններինը:

Կարող ենք տեսնել, որ ատրպէյճանական քարոզչամեքենան հայկական է համարում միայն 19-րդ դարում կառուցուած եկեղեցիները, այն էլ՝ սեփական քարոզչական թեզերից ելնելով, որտեղ հայերը համարուում են եկուոր: Այս մասին վերջերս յայտարարեց նաեւ տիրահոչակ ատրպէյճանական քարոզիչ Բիգվան Հուսէյնովը:

Հիմք ընդունելով քարոզչական այս թեզը՝ ատրպէյճանական կողմը բռնադրաւուած Արցախում հայկական է համարում միայն 19-րդ դարում կառուցուած եկեղեցիները, քանի որ ըստ իրենց՝ մինչեւ 19-րդ դարը հայեր Արցախում չեն եղել: Այս եկեղեցիները չուրջ ստեղծուել է քարոզչական երկակի իրավիճակ՝ մի կողմից դրանք կարծես չպէտք է քանդուեն, քանի որ կառուցուել են ոչ «օկուպանտական» տարիներին, բայց դրանք նաեւ չեն կարող յայտարարուել «աղուանա-ուտիական»: Ուստի հարց է ծագում, թէ ինչ անել սրանց հետ: Վերջին չորս տարում ատրպէյճանական կողմը քարոզչական տեսանկյունից էր հրապարակում 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարսկզբին կառուցուած եւ Պաքուում, Գանձակում, Շամքորում գեոեւս կանգուն հայկական եկեղեցիներ՝ ցոյց տալու համար, որ «հանդուրժող» է եւ խնդիր չուների հայկական ժառանգութեան հետ (այս մասին աւելի մանրամասն տես՝ Ատրպէյճանի «հանդուրժողականութեան» մասին):

Սակայն միւս կողմից՝ 19-րդ դարի այս ժառանգութիւնը եւս խնդրա-

յարոյց է Ատրպէյճանի համար, քանի որ նման եկեղեցիներ կան Արցախի համարեա բոլոր գիւղերում: Կան այս յուշարձանների կառուցման արձանագրութիւնները, որտեղ սովորաբար նշուած է գիւղական համայնքը, մեկնասը, քահանան, եկեղեցիների մի մասի կառուցման մասին կան նաեւ փաստաթղթային վկայութիւններ եւ նկարագրութիւններ: Մակար Պարզուտարեանցը, շրջելով ամբողջ Արցախում, նկարագրում էր հայկական գիւղերը, դրանցում գտնուող յուշարձանները, կառուցողը, վեակառուցողը, նորոգողը գիւղական եկեղեցիները:

Կարող ենք տեսնել, որ սկսած 2020 թուականից որոշ դէպքում դրանք պաշտօնապէս յայտարարուում են կրկին աղուանա-ուտիական, ինչպէս օրինակ Թալիշ գիւղի 1894 թուականին կառուցուած Ս. Ամենափրկիչ եկեղեցին, ինչով հակասութիւն են ստեղծում քարոզչական հիմնական թեզերի հետ (տես՝ Թալիշ գիւղի Ս. Ամենափրկիչ եկեղեցին «աղուանա-ուտիական» հուշակիւ մասին):

Որոշ դէպքերում կարող ենք վաւերացնել, որ 19-րդ դարով թուագրուող նման եկեղեցիներն «անհետանում են», միտումնաւոր վնասում ատրպէյճանական կողմի իրականացուող «ենթա-կառուցուածքային» աշխատանքների ժամանակ, ինչպէս դա եղաւ Հաբրութի շրջանի Մոխրենես գիւղի Ս. Սարգիս, Մադաթաշէն գիւղի Ս. Աստուածածին եկեղեցիների (տես՝ Մոխրենեսի Ս. Սարգիս եկեղեցին, Թշնամին աւերել է

Մադաթաշէն գիւղի դպրոցը, մշակոյթի տունը, յուշարձանն ու վնասել Ս. Աստուածածին եկեղեցին):

Որոշ դէպքերում այս եկեղեցիները ուղղակի պղծուում են, պատուում են գրութիւններով, ինչպէս դա եղաւ Քարինտակ, Ջրաղացներ գիւղերի եկեղեցիների պարագայում (տես՝ Քարինտակի Ս. Աստուածածին եկեղեցին ենթարկուում է վանդալիզմի, Ատրպէյճանի զինուորականները մահմետական աղօթք են հնչեցնում բռնադրաւուած Ջրաղացներ գիւղի Սուրբ Աստուածածին եկեղեցում):

Հարկ ենք համարում նշել, որ Հաբրութի շրջանում ունենք մի իրավիճակ, որ եթէ անգամ եկեղեցիները կանգուն են, ապա միտումնաւոր վնասուել են, աւերուել գիւղերը, իսկ ամբողջ Արցախում հայ չի մնացել, այսինքն՝ չկայ եկեղեցիները կառուցող համայնքը, իսկ նրա բնակավայրերը քանդուում են:

Առաւել բարդ իրավիճակը ստեղծուած է Շուշիում: Ատրպէյճանական քարոզչամեքենան առհասարակ մերժում է քաղաքի հայկական ինքնութիւնը, ինչի դրեւարումը խորհրդային տարիներից դեռեւս մի կերպ պահպանուած հայկական գերեզմանոցների հիմնական եւ վերջնական աւերումն էր վերջին տարիներին: Փաստ է, որ ատրպէյճանական կողմը որոշել էր Շուշի քաղաքում չտեսնել, վերացնել անգամ իր քարոզչամեքենայի թեզերով առկայ

Մոնթրեալի Սուրբ Յակոբ Ազգային Վարժարանի 50-ամեակի նուիրահաւաքի պաշտօնական մեկնարկին հանգանակուեցաւ \$476.650 տոլար



Հինգշաբթի, 21 Նոյեմբեր 2024-ին, Մոնթրեալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի (ՍՅԱՎ) «Տիգրան եւ Տիւանա Հաճէթեան» մարզարանէն ներս ՍՅԱՎ-ի Հիմնադրամը կազմակերպած էր ընթրիք-ընդունելութիւն մը, որով պաշտօնական մեկնարկը կատարուեցաւ Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի 50-ամեակին առթիւ նախաձեռնուած նուիրահաւաքին, ներկայութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերբ. Տէր Բարսեղ Արք. Չարեանի ներկայացուցիչ Հոգ. Տէր Յակոբ Վրդ. Եագուպեանի, Լաւալի Սուրբ Գեորգ եկեղեցւոյ Հոգեւոր հովիւ Արժ. Տէր Յակոբ Քնն. Կեատայեանի, Գանատայի Հայոց Թեմի Ազգային վարչութեան ներկայացուցիչներուն, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի եւ անդամ Բաֆֆի Տօնապետեանի, Մոնթրեալի Քաղաքապետական խորհուրդի անդամ Վանա Նազարեանի, Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Հոգաբարձութեան անդամներու, քոյր միութիւններու եւ պատկան մարմիններու ներկայացուցիչներու, բարերարներու, վարժարանի անձնակազմին, ծնողներու եւ ջրջանաւարտներու:

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ նախկին շրջանաւարտ եւ այժմ ծնողք ժիւլի Հինտոյեան, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Վարժարանիս հիմնադրի անդամները, գաղթի պատճառաւ նոր միջավայրի մէջ յայտնուելով ապրեցան վերիվայրումներ, բայց հազրեւ կազմաւորուած՝ հիմնեցին դպրոց մը, յոյսով որ իրենց զաւակները ունենան աւելի կայուն կեանք, կառչած մնալով հայ մշակոյթին: Հաստատուէն կրնանք ըսել, որ անոնք յաջողեցան ոչ միայն իրենց զաւակներուն ապահովել հայկական միջավայր, այլեւ ապագայ սերունդներուն եւս: 50 տարիներ առաջ սերմերը ցանուեցան, եւ այսօր ունինք պտղատու ծառեր, որոնց ճիւղերը կ'երկարին ու կը տարածուին»: Անկէ ետք տեսերիզով մը ելոյթ ունեցաւ վարժարանի նախակրթարանի եւ երկրորդականի աշակերտներէ, ինչպէս նաեւ շրջանաւարտներէ բաղկացած երգչախումբը, որոնք ներկայացուցին վարժարանի վերամշակուած քայլերգը, խմբավարութեամբ Գալար Հարպոյեան Գալարեանի: Նշենք, որ քայլերգին բառերը գրած է Արսէն Երկաթ, իսկ երաժշտութիւնը յորինած է Երուանդ Ալեքսանեան: Նշենք, որ վարժարանի յիսնամեակին առթիւ ժան Մկրտիչեան քայլերգին երկրորդ համարը թարգմանած է Ֆրանսերէնի, իսկ Նայիրի Փիլոյեան կատարած երաժշտութեան նուագախմբային մշակումը:

Խօսք առաւ վարժարանին Վարչական խորհուրդի նախկին անդամ Թորոս Պապիկեան, որ անդրադառնալով վարժարանին կիրարկած Քեպլէր նահանգի կրթական ծրագրին կողքին տարուած աշխատանքին՝ ըսաւ. «Սուրբ

Յակոբ Ազգային վարժարանը իր Սարգեան նախակրթարանով եւ Բասոր-մաճեան երկրորդականով կը ստեղծէ հայաշունչ եւ ապահով միջավայր, ուր կ'իրականան հայերէնի, հայոց պատմութեան եւ հայ մշակոյթին վերաբերող ծրագրերը, կը ջանքուի ազգային դաստիարակութիւն, ունի վկայաւ ուսուցչական կազմ, ուսուցիչ-աշակերտ նպաստաւոր փոխյարաբերութիւն, եւ կ'իրագործուին գիտական յառաջացիլ դասընթացներ ու կը տրամադրուին անոնց յարակից սարքերը»: Ապա Հայր Յակոբ կատարեց սեղաններու օրհնութիւնը, որմէ ետք տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւն:

Ելոյթ ունեցաւ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Հոգաբարձութեան ատենապետ Սարո Տէր Պետրոսեան, որ իր խօսքին մէջ շեշտեց. «Դիւրին պիտի ըլլար պարզապէս երկրին լեզուին տիրապետող սերունդ հասցնելը: Այդ մէկը կատարող տեղական հաստատութիւններ չեն պակսիր: Մենք կ'ընենք անկէ շատ աւելին: Մեր դպրոցը կը հասցնէ ոչ միայն կրթական լաւագոյն հաստատութիւններուն պատրաստ ուսանողներ, այլ անոր կողքին նաեւ իրենց մայրենիին, անցեալին, իրենց պատմութեան տիրապետող անհատներ, որոնք հպարտօրէն կրնան ըսել, որ իրենք հայ են, ոչ միայն ծագումով, այլ հայ են իրենց առօրեայով, կենցաղով, լեզուով, խաղով, երգ ու պարով», ապա աւելցուց. «Հետեւեալը, մեր երազն է զայն ա՛յլ աւելի բարգաւաճած տեսնել եկող 50 տարիներուն: Մեր երազն է, որ ան ըլլայ այնքան քաջողական իր եռացող հայրութեամբ եւ արձանագրած յաջողութիւններով, որ նախանձը չարժէ բոլոր հայ ծնողներուն, որոնք ուզեն իրենց զաւակները յանձնել մեր օճախին, առանց կասկածի ու երկմտանքի, առանց թերահաւատութեան, կամաւորաբար իրենց երեխաները առաջնորդելով դէպի մայրենիին անդաստանը, որպէսզի մեր ինքնութեան մաս կազմող «Հայ» արժանաւորապէս արժեւորենք եւ մեր լեզուն եւ մեր ազգը որք չձգենք»: Ատենապետը վարժարանին ոտնագնդակի դաշտի նորոգման ծրագրին անդրադառնալով յայտնեց. «Ընդհանուրապէս մը մասնաւորաբար անդրադարձ կատարել ոտնագնդակի դաշտի մեր ծրագրին: Առաջին հերթին կ'ուզեմ յատուկ շնորհակալութիւն յայտնել այս ծրագրի տարիներով հետապնդած ՀՄԸՄ-ի իրերայաջորդ վարչութիւններուն, որոնց հետեւողական ճնշումին որպէս հետեանք, այս տարի, ի վերջոյ, Հոգաբարձութիւնը տեղի տուաւ եւ որոշեց իրականացնել զայն: Այս ծրագրի իրականացման համար մենք ունինք երկու մեծ նուիրատուներ, որոնց անունները հոս յատուկ կերպով եւ արժանաւորապէս կ'ուզեմ յիշել. տէր եւ տիկին Շանթ եւ Քրիսթին Թոպի եւ իրենց շրջանաւարտ զաւակները՝ Մայքըլ եւ Ալեք,

որոնք կը նուիրեն \$1.250.000 տոլար: Alan and Roula Rossy Family Foundation-ին եւ յատկապէս հիմնադրամին ներկայացուցիչներուն՝ տէր եւ տիկին Էմիլի եւ Լիանա Պաղրամեաններուն եւ իրենց Սուրբ Յակոբ յաճախող զաւակներուն՝ Արեգին եւ Միքայէլին, որոնք կը նուիրեն \$1.000.000 տոլար»:

Վարժարանի տնօրէնուհի Լոուի Ապրաքեան ներկայացուց 50-ամեակին առթիւ նախատեսուած առաջին ծրագիրը: Ան նախ վարժարանի հիմնադրութեան անդրադառնալով ըսաւ. «Սրբազան «Խնեթ»-ը էին անոնք, որոնք Գանատա հաստատուելէ քանի մը տարի ետք, իրենց անձնական կեանքը բարելաւելու մասին մտածելէ առաջ, գաղութի ապագան կերտելու աշխատանքին լծուեցան՝ ամբողջական նուիրումով եւ հաւատքով: Անոնք ոչ մէկ երկմտանք կամ վախ ունէին նիւթականի հայթայթման, կրթութեան նախարարութեան պայմանները լրացնելու եւ անձնակազմ գտնելու ուղղութեամբ: Իրենք դիտէին, որ հայ դպրոցն էր, որ պիտի միացնէր հայ մանուկները, ամրապնդէր համայնքը, սերունդ կերտէր եւ փոխանցէր անոնց մեր ժողովուրդի հոգեւոր մշակութային արժէքներն ու մարդ ըլլալու արժանիքները»:

Տնօրէնուհին անդրադառնալով վարժարանի բակին ներկայ իրավիճակին՝ յայտնեց. «Բախտաւոր ենք հսկայական խաղաղատեղի, ուր նախակրթարանի աշակերտները առիթ ունին վազվզելու, պարելու, գծելու, օրօրուելու, եւ FIFA-ի խաղերէ աւելի լուրջ ոտնագնդակի մրցոյթներ կազմակերպելու: Մեր բակը սակայն աւելին է: Ան նաեւ համախմբող միջավայր մըն է, Տարեկան քերմէսէն սկսեալ մինչեւ ՀՄԸՄ-ի, շաբաթօրեայ, կիրակնօրեայ վարժարաններու աշակերտներուն եւ Արարատ ծամբարի երեխաներուն համար: Բայց պէտք է ընդունիլ, որ իր ներկայ վիճակով այդքան ալ գրաւիչ չէ»:

Անկէ ետք Ապրաքեան տեսերիզի ցուցադրութեամբ ներկայացուց բակին վերանորոգման եւ նոր չափանիշներով նախագծման ծրագիրը, ապա իր խօսքը փակեց ըսելով. «Բնութեամբ ծաղկուն, ինչպէս նաեւ ստեղծագործելու հնարաւորութիւններ ներառելով մեր խաղաղատեղին մէջ, ներգրուած կ'ունենանք մեր ներկայ եւ ապագայ աշակերտներուն ամէնէն թանկագին եւ յիշատակելի պահերուն: Պիտի տանք իրենց միջավայր մը, ուր պիտի խաղան, սորվին, կազմաւորեն իրենց հայկական ինքնութիւնը եւ որպէս այս երկրի քաղաքացիներ՝ պատրաստ ըլլան ապագայի բոլոր մարտահրէշներուն: Եկէք միասնական ճիգերով, կողք-կողքի յոյսի եւ լոյսի աղբիւր դառնանք, կառուցենք ապագան՝ մեր խորունկ արմատներէն թոխիչով մը դէպի նոր բարձունքներ նուաճելու, ստեղծելով այնպիսի ներշնչող եւ ոգեւորող միջավայր մը, ուր

արմատ պիտի նետեն, պիտի մեծնան, պիտի ծաղկին մեր գաղութին ապագայ սերունդները»:

Խօսք առաւ վարժարանի ելեւմուտի եւ նուիրարչաւի տնօրէնուհի Թամար Եագուպեան ըսելով. «Ով որ յաճախած է Սուրբ Յակոբ հայկական վարժարանը, ով որ պաշտօնավարած է կամ որպէս կամաւոր աշխատած է, դիտէ, որ իսկապէս պատիւ է անոր մաս կազմելը: Եւ ով որ հնարաւորութիւն չէ ունեցած այս փորձառութիւնը ունենալու՝ դժուար թէ կարենայ հասկնալ, թէ ի՞նչ կը նշանակէ մեզի համար այս հաստատութիւնը. այն մեր երկրորդ տունն է, մեր մեծ ընտանիքը»: Ապա ան անդրադարձաւ 50-ամեակին առթիւ նախատեսուած երկրորդ ծրագրին՝ Դրամադրամային հիմնադրամի ստեղծման, եւ յայտնեց. «Դրամադրամային հիմնադրամ մը ստեղծելով, մենք երկար ժամանակի վրայ կը կարենանք երաշխաւորել տարբեր կարիքներ դոճացնող վերահսկուած նիւթական աշակերտներուն տրամադրելու մեր կարողութիւնը», անկէ ետք Եագուպեան հանդէս եկաւ շնորհակալական խօսքով, որուն ընթացքին բեմ հրաւրեց 50-ամեակի Հանգանակութեան յանձնախումբի անդամները՝ առ ի երախտագիտութիւն անոնց տարած անխնջ աշխատանքին: Ապա յանձնախումբի անդամ Լէոն Աղազարեան յայտարարեց, որ Մանուկ Չուխաճեան ընտանիքի հիմնադրամը կը հաստատէ \$1,000,000 տոլարի ֆոնտ մը, որուն նպատակն է աշակցիլ համեստ եկամտով տէր ընտանիքներուն՝ կրթականպատմութեան հայթայթելով: Ան յիշեց նաեւ, որ այս տարի կը նշուի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի ֆոնտին եւ Մանուկ Չուխաճեան ընտանիքի հիմնադրամին միջեւ գործակցութեան 12-ամեակը:

Յիսնամեակին առթիւ սկիզբ առած նուիրահաւաքի սոյն երեկոյին ընթացքին իրենց մասնակցութիւնը բերին տէր եւ տիկին Փիրայր եւ Հուրի Չաքարեաններ, իրենց եղբոր՝ ազգային բարերար Հրայր Սողոմոնեանի յիշատակին, նուիրելով \$100.000 տոլար, ինչպէս նաեւ Մոնթրեալի Հայ Կեդրոնի Տարեցներու միութիւնը այս առթիւ նուիրեց \$50.000 տոլար: Երեկոյի նուիրատուութիւններուն ընդհանուր գումարը հասաւ \$476.650 տոլարի:

Նշենք, որ վերոյիշեալ երկու ծրագիրներուն համար նախատեսուած է հանգանակել երկուքուկէս միլիոն տոլար, որոնցմէ մէկուկէս միլիոնը պիտի յատկացուի բակի վերանորոգման ծրագրին, իսկ մէկ միլիոնը՝ Դրամադրամային հիմնադրամի ստեղծման ծրագրին:

Հոգ. Տէր Յակոբ Վրդ. Եագուպեանի «Պահպանիչ»-ով փակուեցաւ ձեռնարկը:

Սոնա Թիթիզեան Կէտիկեան Լուսանկարները՝ Արմէն Ալէմեանի

Սուրիոյ ճակատագիրը «կը յստականայ»

Շաբաթ մը չէ բոլորուած նախագահ Պաշտար Ասատի իշխանութեան վախճանէն ետք, իսկ Սուրիան կը մնայ հազար ու մէկ մեկնաբանութեան ու հակասական նախատեսութիւններու կիզակէտ: Արեւմտեան մամուլը կը պահէ տասնամեակներէ ի վեր Սուրիոյ հանդէպ հետապնդուած ծրագիրներուն ջատագովի իր դիրքորոշումը, թէեւ քննական մօտեցում մը ի յայտ կը բերէ, որ ամբրիկեան եւ եւրոպական ակնոցներուն միջեւ տարբերութիւններ կան: Ընդհանրուր հասարակաց գիծը այն է, որ Ասատի հեռացումով, Արեւմուտքը յաջողեցաւ Սուրիան առնել իր ազդեցութեան տակ, վաղը կընայ ուսական ուժերը հեռացնել — գոնէ պահանջել — սուրիական ծովափէն, յետոյ աչքերը տարածել դէպի արեւելք(ներ), դէպի Իրաք եւ Իրան, նոյնքան մըն ալ դէպի Կովկաս: Միւս գորակայանին՝ Ռուսիոյ եւ Իրանի դիտանկիւնէն, մտավախութիւնները այլապէս արձագանգ են Արեւմուտքի յառաջիկայ քէն բխած քարոզչութեան միջոցորտին: Իսկ Սուրիոյ «նեղ սահմաններուն» մէջ, ամէն օր եւ ամէն ժամ կը բացայայտուի Սուրիան մասնատելու եւ ազդեցութեան գոտիներու վերածելու արշաւի մը նորագոյն արարները:

Այս ընդհանուր գիծերուն դիմաց (կարելի չէ բոլոր գիծերը ցանկագրել այստեղ), գետնի վրայ դէպքերը կը թաւալին տարբեր, յաճախ ներհակ, եւ զգուշաւոր լաւատեսութիւն ակնող մեկնաբանութիւններ ջրող թափով, մաս մըն ալ կը պահուի քողի տակ: Արեւմուտքի մէջ տարածուած եւ սուրիական որոշ խաւեր վարակած հրճուանքին դիմաց, գետնի վրայ կան դաժան իրականութիւններ, որոնք, ինչպէս նշեցինք, կը պատկերուի յիշեալ երգիծանկարով:

Խորքին մէջ, ի՞նչ տեղի կ'ունենայ գետնի վրայ եւ ինչպէ՞ս կը յստականայ Սուրիոյ (եւ այլոց) հորիզոնը:

Սուրիոյ վախճանեալ իշխանութեան ներկայացուցիչները կ'աշխատին անցնցում իշխանափոխութիւն իրականացնել, եւ ընդգրկմանը ներքին ալ այդ ուղղութեամբ զբաղուած տրամադրութիւն կը ցուցաբերեն, հակառակ վրիժառուութեան բանաւոր եւ գործնական գրասերութեաններու: Եթէ այս բեմին

վրայ ընդհանուր ընթացք որոշ չափով յուսատու կը թուի, այդ նեղ բեմին անդին, սակայն, իրական գետնի վրայ զարգացումները աւելի՛ քան յոռետեսութիւն կը բերեն (նկատի չունինք քաղաքական-դիւանագիտական կալուածին շատ աւելի լայն տարածքը): Մինչեւ իսկ եթէ ճշմարտութիւն կայ այն վարկածին մէջ, թէ փոխանցման իշխանութիւնը նախանձախնդիր է Սուրիոյ ամբողջութիւնը պահպանելու եւ երկիրը վերականգնելու (տակաւին յայտնի չէ, թէ գործնական ի՞նչ ծրագիր ունի, կամ ո՞վ պիտի արտօնէ նման բան), գոնէ երեք գլխաւոր մարտահրաւէր կը դիմագրաւէ ընդդէմ այս առաջադրանքին:

ԻՍՐԱԷԷԼ, ո՛չ միայն չէ կասեցուցած Սուրիոյ վրայ յարձակումները, այլ նոր քայլեր կ'առնէ 1967-ի պատերազմին իր խլած հողերը ընդարձակելու ուղղութեամբ: Իր ապահովութիւնը պահպանելու «կանխարգելիչ գործողութիւններ»ու պատրուակով, Իսրայէլը գրաւած է Կոլանի բարձունքներուն այն հատուածը, որ անցեալ տասնամեակներուն կը նկատուէր «ոչ-որքի-հող», աչքերը ուղղած է մինչեւ Դամասկոս տարածուող գոտիներու: Զուգահեռաբար, անոր օգուտը այնպիսի ծաւալի հասցուցած է (իրբեւ թէ) զինուորական կէտերու վրայ իր յարձակումները (3 օրուան մէջ աւելի քան 450 թիրախ), որոնք ցոյց կու տան, թէ (արեւմուտքիներու օրհնութեամբ) ան վերջնականապէս կը խորտակէ երկրին պաշտպանողական կարողութիւնը. իսկ Սուրիան Իսրայէլի ծաւալապաշտութեան դիմաց կանգնող վերջին պարսպն էր (անկախ թէ ով էր իշխանութեան ղեկին):

ԹՈՒՐԿԻԱ, իր կարգին, ուղղակի եւ անուղղակի ձեռքբերով, նոր տարածքներ կը գրաւէ, արդէն ամբրիկեան միջնորդութեամբ պարտադրած է, որ քիւրտերը Հալէպի հիւսիսային շրջանին մէջ վար դնեն գէնքերը (նախորդ օրերուն քիւրտերու ջարդի եւ հալածանքի, բռնագողթի դրուագներ արձանագրուած էին, ու որոշ քիւրտերը վաղը կընան հիասթափուելի գիւրեմք իրբեւ թէ պաշտպանողներէն), իր հովանաւորեալները գրաւեն նա՛եւ Տէր Զօրի շրջանը: Այս բոլորը պարզ ցու-

ցանմուշներ են, որ Ալեքսանտրէթի շրջանը վերջնականապէս կու տալէ ետք, համաթուրանականութեան վերականգնումը ինչպիսի՛ հեռանկարներու իրականացման լծուած է դէպի արաբական աշխարհ:

ԱՄԵՐԻԿԱՅԻՔ կը յոխորտան, որ կը ուժեղանան անհարկահաւան խմբաւորումներու հակակշիռին եւ թաւալալ շրջանները, թոյլ պիտի չտան, որ ծայրայեղականներ դարձեալ հակակշիռ հաստատեն սուրիական որոշ շրջաններու մէջ: Անոնք այլապէս լուռ (ի՞նչ լուռ) գործակցութեան մէջ են Սուրիոյ արեւելեան եւ հիւսիսային գոտիներու քարիւղի դաշտերուն հսկիչ կարգուած ուժերուն, մասնաւորաբար քիւրտերու մէկ թեւին հետ: Անոնք վստահաբար չեն ուզեր, որ աշխարհի յիշէ, թէ իրենք ինչպիսի՛ «հերոսութիւններ» արձանագրեցին Աֆղանիստանի եւ Իրաքի մէջ, ժողովրդավարութիւն տարածեցին հոն եւ այլուր...

Եթէ շարունակենք Սուրիոյ մէջ նորացուած «հնութիւններուն» ցանկագրումը, կընանք հասնիլ մինչեւ 80-ականներու սկիզբը, երբ սուրիացի «ընդդիմադիրներ», որոնք կը կրէին «խլած եղբայրներ» անունը, ուժեղ հարուած ստացան Համայնի մէջ: Կ'արժէ՞ արդեօք դէպի ետ ճամբորդութիւնը շարունակել մինչեւ այն տարիներն ու ներքին խլրտումները՝ արաբ-իսրայէլեան բազմահանգրուան պատերազմներու տարիները, երբ գաղթատիրութեան ձեռքադատած Սուրիան — եւ արաբական այլ երկիրներ — հետեւողական կերպով «պատիժի» կ'ենթարկուէին նախկին գաղթատէրերու կողմէ, ուղղակի թէ անուղղակի միջոցներով, սակայն բացայայտօրէն՝ Իսրայէլի եւ Թուրքիոյ ձեռքբերով: Եւ անհասարակ ենք նորագոյն բեմագրութեան, ողբերգութեան: Հիմա, արդէն կ'ուրուագծուի այն պատկերը (կամ աւելի՛ կը մթագնի հորիզոնը), յիշեցնելով «բռնատէր Սատտամը եւ բռնատէր Քադաֆիին» իշխանութեան հեռացնող այն շարժումները (հոն ալ բարի նպատակներ ու տրամադրութիւններ արտայայտուած էին), որոնք այդ երկիրները վերածեցին ծանօթ անկումներու եւ բաժանումներու դաշտերուն: Այլապէս, ժողովրդավարութեան

եւ այլ պիտակներու տակ, արաբական աշխարհն ու այլք ենթարկուած են աւելի՛ անաւոր գաղթատիրութեան, թէեւ այդ անունը չի գործածուիր, այդ իրականութիւնը ցոյց տուողներուն դէմ քարոզչական անհղ արշաւներ կը կազմակերպուին:

Սուրիոյ իրադարձութիւնները ցոյց կու տան, թէ աշխարհի վերափոխումն ու քարտէսներուն վերագծումը ինչպիսի՛ ընթացքի մէջ են, թէ որքան յստակ է Սուրիոյ ապագան, հորիզոնը:

Մեր այս սիւնակի կիզակէտէն անդին, կան անշուշտ Ուքրայինան, Կովկասը՝ Իրանի հիւսիսային գոտին, կամ ասիական եւ ամերիկեան կուռախնձոր գոտիներ: Այս բոլորը ամենալուրջ հրաւերներ, մարտահրաւերներ են նաեւ մեր հայրենիքին՝ Հայաստանի համար, որուն գլխավորեալն կը բազմանան «Դամոկլեան սուր»երը:

Հայրենի հողին վրայ թէ Սիւրուքի տարածքին, այս ընդհանուր պատկերը տեսողներ կա՞ն, մտահոգուածներ կա՞ն, վտանգները դիմագրաւելու եւ դարձեալ ծանր կորուստներ կանխարգելելու մասին մտածողներ կա՞ն. այո՛ կան: Սակայն եթէ իշխանութիւնը պէտք է ըլլայ առաջին գիծին վրայ, դառնայ հայութեան կարողականութիւնն ու ներուժը, բոլոր ձեռքերը համախմբողը, տեսանելի է, որ անիկա, ընդհակառակն, կ'առաջնորդէ յաւելեալ անկումի, նոր անձնատուութիւններու եւ կորուստներու արշաւ մը, լծուած է ամէն օր նոր զբաղում մը, իրականութիւններէն աչքեր ու միտքեր հեռացնող խաղերու, որոնց նորագոյն արարները կը կազմեն ՔՊ-ականներու «մաքրագործումը»: Սա համազօր է քնաբեր օրօր-ի, մինչդեռ «Զարթի՛ր, լաօ՛»ն բազմաթիւ անհազանք հնչեցուցած է եւ նոյն քարոզիչներուն եւ «օրօր»-ողներուն կողմէ ճնշումի ենթարկուած:

Մինչեւ ե՞րբ.
Ահագանք հնչեցնողները պատրաւոր են ԳՈՐԾի անցնիլ:

Ս. Մահաւէրճեան
11 Դեկտեմբեր 2024

Շուտով լոյս պիտի տեսնէ Սիմոն Զաւարեանի անոխայ Գամակներու հատորը

Շուտով՝ տարին չաւարտած, լոյս պիտի տեսնէ Հ.Յ.Դաշնակցութեան խիղճը համարուող Սիմոն Զաւարեանի անտիպ նամակներու հատորը, որ կու գայ լրացնելու Քրիստափորի եւ Ռոստոմի անտիպ նամակներու հրատարակութեան շարքը:

Մամուլի տակ գտնուող եւ Հ.Յ.Դ.Բիւրոյի հրատարակչական աշխատանքներէն հանդիսացող այս հատորին մասին զեռ անդրադարձ կը կատարուի, սակայն մեր յաջորդ գործը արդէն իսկ ընթացք առած է, շնորհիւ բոլորէն սիրուած ու յարգուած վաստակաշատ պատմաբան եւ այս տիտանական հատորներուն խմբագիր՝ Երուանդ Փամպուքեանի:

Ահա կը թեւակոխենք մեր համատեղ աշխատանքի 19-րդ տարին: Ընդհանրապէս չեմ անդրադառնար առօրեայ գործերու մասին, որ ձեռագիրներու, եւ շատ անգամ բարդ ու հանելուկային ձեռագիրներու հետ շփումն է, սակայն անձայրածիր գիտելիքներու եւ նորանոր բացայայտումներու շտեմարան մըն է հաստատ: Մէկ խօսքով՝ իւրաքանչիւր օր նոր բան մը սորված տուն կը վերադառնամ, անհունօրէն

գոհունակ սրտով: Այս հատորները բարձի գիրք չեն կրնար ըլլալ անշուշտ, եւ միայն քիչեր կը կարդան զանոնք, սակայն ապագայ գիտահետազոտողներու եւ պատմաբաններու հսկայական ազբիւր են անկասկած եւ այդ իսկ պատճառով՝ խիստ անհրաժեշտ:

Մեր յաջորդ՝ նախապատրաստութեան հանգրուանին գտնուող հատորը, այս անգամ պիտի յատկացուի եղբրաբայտ գրող, ազգային գործիչ Ռուբէն Զարգարեանի (Ասլան ծածկանունով) նամակներուն:

Ռուբէն Զարգարեանի գրական վաստակը ծանօթ է բոլորին, սակայն այստեղ ան կը ներկայանայ իբրեւ Ուշագրաւ է, որ այս նամակները իրենց պարունակած տեղեկութիւններէն անդին գրական երանգ մը ունին, եւ այդ հանգամանքը ինձի համար շատ հաճելի է:

Հարուստ բառապաշարով, գեղեցիկ ու սահուն ոճով նամակներ, մանաւանդ սկզբնական շրջանին գրուածները, որոնցմէ ոմանք «Դրօշակ»ի մէջ ալ լոյս տեսած են: Ըսեմ, որ Զարգարեանի ձեռագիրը ընթեռնելի է.

վարժ ըլլալով հանդերձ, ինքս երբեմն ստիպուած եղայ բառարանի օգնութեան դիմելու, կամ հարցնելու, վստահ ըլլալու համար թէ արդեօ՞ք ձեռագիրը ճիշդ կը կարդամ, թէ ոչ:

Ձեզի հետ կը բաժնեմ քանի մը բառեր, որոնք շատ հաւանաբար դատապարտուած են բառարաններու մէջ մնալու:

Ահաւասիկ.
Ջայլ — ողբ, լացուկոծ
Ընչացք — պիխ
Գեղարան — մամուլ, տանջանքի գործիք

Գրիւ — ընդեզէն կշռելու հին չափ (այս մէկը այլեւս չի գործածուիր վստահաբար...):

Ուրեմն ինչպէս չափսոսալ ներհուն մտաւորական, իր կարգին սերունդները դատարարակած Ռուբէն Զարգարեանին, որ զոհ գնաց 1915-ի Ցեղասպանութեան... Արդեօք ի՞նչ կ'ըլլար հայ գրականութեան եւ պատմագրութեան ճակատագիրը...

* * *
Սպասենք այս գողտրիկ հատորին, որ անգամ մը եւս պիտի գայ թարմացնելու մեր յիշողութիւնն ու հարս-



տացնելու մեր գրադարանը:
Ուժ ու կորով, երկար ու առողջ օրեր կը մաղթեմ ղեկավարիս՝ Երուանդ Փամպուքեանին:

Թամար Սնայան-Սուրճեան



ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Ը. Տարի, Թիւ 1, Դեպտեմբեր 2024



ՆՈՐ ՏԱՐԻ՝ ՀՐԱԻԲ ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐԻ

Քրիստոնէական ամենաջերմ սիրով կ'ողջունեն ձեզ սիրելի հայորդիներ:

Դարձեալ հրաժեշտի պահը հասաւ: Հրաժեշտ կու տանք 2024 տարուան: Տարի մը եւս իր 365 օրերով թաւազոր սահեցաւ եւ անցաւ պատմութեան գիրկը եւ բնականաբար կը պատկանի անցեալին: Սակայն, տարիներու շղթան անընդմիջաբար կը շարունակուի:

Հաշուեյարդարի պահն է: Հանշուեյարդար պէտք է կատարենք անհատաբար եւ հաւաքաբար, հարց տալու թէ որքանով կրցանք արժեւորել եւ իմաստաւորել անցնող տարին: Որքանով կրցանք մեր նպատակադրուած ծրագիրները իրականացնել:

Ահաւասիկ Նոր Տարին կը դիմաւորենք այս անգամ 2025 թուականով անուանակոչուած: Անհատաբար, հաւաքաբար եւ ազգովին ունինք նոր ակնկալութիւններ, նոր յոյսեր եւ երազներ...: Սակայն երազները իրականացնելու համար խաղաղութեան կարիքը ունինք: Այո, իւրաքանչիւր ժողովուրդ խաղաղութիւն կը ցանկայ: Իւրաքանչիւր ճնշուած ժողովուրդ ազատութիւն կը տենչայ՝ իր ճակատագիրը սեփական ուժերով տնօրինելու համար:

Նոր Տարին ինչ կը փոխէ: Արդե՞ծք կրնայ մեզ փոխել: Բնականաբար ոչ: Նոր Տարին ոչինչ կը փոխէ, եթէ մենք մեզ չփոխենք, չվերանորոգենք եւ չիմաստաւորենք մեր դիմաց բացուող Նոր Տարուան իւրաքանչիւր օրը եւ ժամը: Մենք տարիներով չենք արժեւորուիր, այլ տարիները մեզմով կ'արժեւորուին: Միշտ ըլլանք իմաստուն եւ արթուն:

Թող Ամանորը, նոր յոյսերով ու նոր իղձերով լուսաւորէ իւրաքանչիւրիս ճամբան: Թող վերանան դժուարութիւնները եւ խաղաղ ու անդորր պայմաններ ստեղծուին ապրելու եւ ստեղծագործելու համար:

Վերանորոգուած եւ պայծառացած հոգիով կը շնորհաւորեն Ձեզ եւ կ'աղօթեմ որ 2025 տարին հայ ժողովուրդին համար ըլլայ վերակազմակերպման եւ հզօրացման, եւ համայն աշխարհի խաղաղութեան տարի:

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս. ՇՆՈՒՆԴ

ԲԱՐԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Նոր տարուան սեմին ենք արդէն եւ պատեհ առիթ է կանգնելու, մտածելու եւ նորոգելու մեր յանձնառութիւնը՝ նկատմամբ այն արժէքներուն, որոնք կը ճշտեն մեր հաւատքը, սէրը, ազնուութիւնն ու վեհանձնութիւնը:

Թուականներու փոփոխութիւնները մեզի նոր սկիզբ մը կը շնորհեն, միշտ յիշեցնելով, որ որպէս քրիստոնէայ պարտաւորութիւններ ունինք եւ այդ պարտաւորութիւններէն մէկն է, դառնալ լոյսը մեր շրջապատին, միշտ հետեւելով Քրիստոսի օրինակին:

Պէտք է յիշենք, որ իւրաքանչիւր կոչուած ենք՝ անձնական ձեռքբերումներէ բացի, մենք զմեզ նուիրելու ուրիշին՝ մեր նմանին, ինչպէս Յիսուս Քրիստոս իր կեանքը նուիրեց մեզմէ իւրաքանչիւրին փրկութեան համար: Այս պէտք է ըլլայ մեր կեանքի ուղեցոյցը: Սուրբ Հոգիով, կոչուած ենք Քրիստոսի սէրը տարածելու մեր շրջապատին մէջ:

